

ապրիլ 17ին Պ. Գ. Արծրունիի առաջին յօդուածն որով վերնագիրն էր «Բնական քիմիայի մասին ճշմարտութիւնը դաստիարակութեան Բն» : Ապառայ հրապարակագիրն այդ առաջին դրութեամբ կը յայտնուէր աշակերտ ազատամիտ դպրոցի : Յօդուածը կը վերջանար Հերչէլի վճռովը, «Յառաջագիւտութեան համար հարկաւոր է մարդուս ոչ թէ միայն շատ բաներ ուսանել, բայց և հարկաւոր է նրան շատ բաներ մոռանալ» :

Այդ յօդուածի հրատարակութեան օրէն ի վեր անցան քսան և հինգ տարիներ : 1865ի թարմ երիտասարդ յօդուածագիրը միշտ հաւատարիմ մնալով իր համոզումներու աշխատեցաւ որ իր ազգն ալ ոչ միայն ուսանի շատ բաներ, այլ և մոռնայ շատ բաներ :

— — —

Մոռնալ շատ բաներ, այս չէ՞ միթէ առաջին և կենսական պայման մեր յառաջագիւտութեան :

Երբ դարերն հնութեան պատկառանքը կուտան ազգի մը մոլութիւններուն ու նախապաշարունակներուն, ա'լ այնուհետեւ մոլութիւնը կը կոչուի «ազգային յատկանիշ», ու նախապաշարումը «ազգային պահպանութեան հիմ» : Ով որ համարձակի քարոզել թէ, այդ յատկանիշն՝ անտանիշ է, որ ամբողջ մարմնին հիւանդութիւնը ցոյց կուտայ : Թէ այդ հիմը՝ փառած է, անոր վրայ բարձրացած շէնքը կը կործանի, այդպիսի քարոզիչ մը «սրբապիղծ» կը համարուի, և «կործանիչ ազգային շէնքին» :

Նախապաշարումի և մոլութեան դէմ կուռող քարոզիչը պէտք է զօրացած ըլլայ բարոյական մեծ ոյժով, և սրտին խորն ունենայ անսահման սէր ազգին համար, որպէս զի կարենայ առկալ ամէն դառնութիւններու, որք առաջ կուգան երբ քարոզիչը չը գողուէր ժողովրդին կրքերն ու ստորնացած գաղափարներն և զգացումներն : Այդ ոյժով զօրացած էր Պ. Գր. Արծրունի, և այդ սէրն ունէր սրտին մէջ երբ որովեց հրապարակագիր ըլլալ, և հիմնեց Մշակի իր գաղափարներու յաղթանակին համար :

Արարատ-կովկասեան հայերը սնած էին

պարսկական ստրուկի կրթութեան խմորովը : Ժողովրդի ամէն խաւերուն մէջ թափանցած էր ստրկական ոգին, որու ախտաբուութեան ներքեւ էին ընտանեկան յարկն ինչպէս նաեւ հանրային ամէն դործեր : ազգի թշնամին այդ ստրկական ոգին էր : անոր դէմ անհաշտ պատերազմ հրատարակեց Մշակ 1872ին, երբ հիմնեցաւ :

Պ. Արծրունիի ուղղութիւնը կոչուեցաւ «մտրակող ուղղութիւն» : այս բացատրութիւն շատ ճիշդ է և բազմիմաստ : Թանձրացած արիւնը մտրակի ազդեցութեան ներքեւ կ'եռայ և կը կենդանացնէ մարմինը : անշարժ մարմինը մտրակի հարուածներու շնորհիւ կը շարժի : Ամէն միտրակող կրնայ համարուիլ աշակերտ Գրիտտոսի որով մտրակէն կտոր մ'ալ իրեն ժառանգութիւն ինկած է : Գրիտտոս այդ իր մտրակի մասունքէն շատ քիչերու կը նըւերէ :

Անաշառ, խիստ քննադատութեան առարկայ եղան ողբին ամէն դասակարգերն, առանց խտրութեան սեռի, դասանանքի երկրի :

Մշակ անխնայ հարուածեց առևտրական դառը ցոյց տուաւ թէ խարդախութիւն, խաբէբայութիւն, ագիտութիւն չեն կրնար պահպանել արուեստներն ու վաճառականութիւնը Հայոց ձեռքերուն մէջ :

Սարսափն եղաւ վախառուներու զորս դիմակալածով ընելով ձողկեց :

Անգութ հանդիսացաւ համալսարանականներու ետական ոգիի դէմ : և խիստ քննադատութեան ենթարկեց հոգեւորականներու վարմունքը, պահանջելով որ իրենց գործերն համապատասխանեն իրենց կոչումին :

Ո'չ մէկ մոլութիւն, ո'չ մէկ յետադիմական գաղափար կարեկցութեան արժանացաւ Մշակի մէջ : Պ. Գր. Արծրունիի մեծ գործերէն մին եղաւ կրօնական ներողամտութեան յաղթանակը : Չար սիրտ մը, տկար միտք մը միայն կրնայ թշնամի ըլլալ և հալածիչ անոնց որք իրմէ կրօնական տարբեր գաւառանք ունին : Պ. Արծրունի համոզուած էր թէ որչափ ատեն որ Հայերը կրօնքի պատճառաւ զիրար առնեն, միշտ տկարամիտ և չարասիրտ պիտի մնան : կրօնական ներողամտութիւն քա-

բողեց. հռչակեց թէ՛ ամէն հայեր միշտ եղբայր են, կրօնական ինչ դաւանանքի ալ վերաբերին: Սնհատական շահերն են, ազխութիւնն ու չարութիւնն են որք ատելութիւնը կենդանի կը պահեն տարբեր դաւանանքներու վերաբերող Հայոց մէջ: Երբ հայերը խզճի անսահման ազատութիւնը չյարգեն՝ երբեք քաղաքակրթութիւնը յաւակնութիւնը չպիտի կրնան ունենալ:

Կրօնական անխտրութեան մէջ Օտեանէ մը, Պէշիքթաշլեանէ մը աւելի ազատամիտ հանդիսացաւ Պ. Արծրունի: Մշակեց հայ թերթ մը և ոչ թէ կրօնական թերթ մը. Մշակի մէջ բոլոր հայերը սիրեցին զիրար:

Եւ միթէ Պ. Արծրունիի քարոզութիւններուն պատճառաւ հայադաւան մը փոխեց իր կրօնքը: Բնաւ երբեք: Ընդհակառակն հայ եկեղեցին աւելի սիրելի ու ակնածելի եղաւ կաթողիկ ու բողոքական հայոց:

Կաթողիկ, բողոքական թէ՛ հայադաւան հայերն զիրար եղբայր ճանչցան, զիրար սիրեցին, իրարու ձեռք կարկառեցին:

Եղբայրակցութիւն, սէր, համերաշխութիւն միթէ մեզ համար կրնա՞ն համարուել շուայրութիւն, մեզ՝ որ միաբան գործելու այնքան պէտք ունինք:

— — —

Կրօնական անխտրութեան պաշտարանը չէր կրնար անշուշտ աշխարհագրական խտրութիւններ դնել հայոց միջեւ: Մշակեթէ եղաւ ամէն դաւանանքէ հայերութեթին, եղաւ նաև ամէն երկրի հայերութեթին: Մշակ յուզեց աշխարհիս ամէն երկրի հայերու ամէն կարգի խնդիրներն:

Սակայն գաղթականութեան թշնամի է Պ. Արծրունի, և ազգի մը պահպանութեան էն կենսական պայմանը կը համարի հայրենի հողն ու լեզուն:

Պ. Արծրունիի այս շատ հիմնական գաղափարներու մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ չենք կրնար տալ: Միայն կրնանք ըսել թէ մեր ամէն ձեռնարկներն որոց նպատակն էր մեր բնավայրերու զարգացումն միշտ հզօր աջակցութիւն գտան Պ. Արծրունիէն:

Իմ յիշողութիւնս կը հասնի 1876 թը-

ւականին. այդ միջոցին սկզբնաւորութիւն եղաւ Պոլսի և Մշակի միջեւ այն սերտ յարաբերութիւններուն, որք անընդհատ կը շարունակուին տասն և չորս տարիներէ ի վեր:

Մշակ հանգանակութիւն բացաւ 1876 թուականին պատահած դէպքերու առթիւ. այնուհետեւ աջակցութիւնը շարունակեց:

Ինձ համար աւելի սիրելի էր խօսիլ երկարօրէն այն կրթական խմատուն յորդորներու համար զոր Մշակ մեզ կուտար, այն բարոյական բաժնի գաղափարներու մասին զորս կը տարածէր մեր մէջ մեր ամէն գործերուն առթիւ. բայց կարճաւոյտ յօդուածի մը չըջանակը ներելի չընէր այնքան նիւթ գրել, ինչպէս որ չեմ կրնար ամփոփ պատմութիւն մը ընել Մշակի ամէն գաղափարներուն և գործերուն:

Ի Պոլսի 1876ին հիմնուեցաւ Արարատեան Ընկերութիւնը որու նպատակն էր նախնական կրթութեան տարածումը: Իր ծրագրին աւելի ընդարձակ սահմանի մէջ գործադրել կարենալու համար ընկերութիւնը գիմեց Մշակին: Պ. Արծրունի այն ատեն ոչ ոք կը ճանչնար Պոլսէն. միայն երիտասարդի մը ծանօթացաւ որ յատկապէս զինքը տեսնելու համար Պոլսէն թիֆլիզ դնացած էր. այդ երիտասարդ ընկերութեան հիմնադիրներէն էր: Այդ երիտասարդի մեծ ոգին տպաւորութիւն գործեց Պ. Արծրունիի վրայ, որ ըմբռնեց թէ անոր ընկերակիցները լրջաբար աշխատելու ընդունակ կրնան ըլլալ: Առանց վարանելու Մշակ հրաւիրեց Արարատ-Կովկասեան հայերն աջակցիլ Արարատեան ընկերութեան:

Ընկերութիւնն անուպատելի աջակցութիւն գտաւ Քաջալերուած այդ աջակցութեանէն աւելի եռանդով աշխատեցաւ. Պոլսեցիք տեսնելով թիֆլիզէն եղած նրպատմներն իրենք ալ սիրտ առին, և աւելի մեծ օգնութիւններ ըրին ընկերութեան: Նմանօրինակ ուրիշ ընկերութիւններ եւս կաղմուեցան: Ատոնք ամէնքը կ'աշխատէին. Պ. Արծրունի հրաւիրեց զիրենք միանալ և այնպէս գործել, անսացին Պ. Արծրունիի հրաւերին, և ի մի ձուլուելով կազմեցին Միացեալ Ընկերութիւններն: Այդ Ընկերութեան զարգա-

ցումն ու միութիւնը Մշակի պարտական ենք :

Քիչ ժամանակի մէջ Մշակ հաւաքեց և Արարատեան ընկերութեան ղրկեց հազար բուսիկէն աւելի :

Երբ սովի լուրերը նոր կը տարածուէին Պոլիս, արդէն Պ. Արծրունի յուզած էր սրտերն, և ի նպատակ սովեալներու դրամ հաւաքելով կը ղրկէր Պոլիս Արարատեան ընկերութեան. տակաւին կազմուած չէր Սովեղոց Յանձնաժողովը : Եւ երբ կազմուեցաւ այդ յանձնաժողով իր մեծ ներուզը Մշակ եղաւ :

Յանձնաժողովի ատենադպիրը Շաշեան Պօղոս էֆէնտի իր ընտրիկ ոճովը կ'ըսէր այդ մատակարարութեան օրերուն մէջ .

— Ամէն ատեն որ յուսահատութիւնը զմեզ կը պաշարէ, երբ անդիէն հաց կը գոչեն ու անտուկնիս դատարկ է, մեր միութեանն ու խաւարին մէջ ձեռք մը կ'երկարի և ափով ոսկի կը նետէ մեր առջեւ . այդ ձեռք Գրիգոր Արծրունեոյ ձեռքն է :

Կրթութեան, սովի, ուրիշ պէտքերու համար Մշակ մի քանի տարիներու մէջ մեզ ղրկեց աւելի քան ՀԱՐԻԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԻԿ :

Ի հարկէ այդ գումար ո' և է կշիռ չունի մեզ համար երբ խօսինք Մշակի մատուցած ծառայութիւններու մասին : Հրապարակագրի մը կոչումը չէ դրամ հաւաքել բարեգործական նպատակով : Եթէ Մշակ բնաւ հանգանակութիւն ըրած չըլլար իր արժանիք պիտի մնար նոյնն ինչ որ եղած է և է : Մշակի մեզ մատուցած դրամական ծառայութիւնները կը յիշեցնեմ պարզապէս այն պատճառաւ որ այդ ծառայութիւններ Պ. Արծրունիի զօրութեան ակներեւ ապացոյցներէն են :

Մինչեւ վերջի ատեններս հայ ժողովուրդը հոգեւորականներու հնազանդելով, կամ աշխարհականներու հաւաքական ոյժին հաւատք ընծայելով դրամ կուտար բարեպաշտական գործերու . միայն Պ. Արծրունիի եղաւ որ ո'չ հոգեւորական ըլլալով և ո'չ ալ ընկերութեան մը անդամ, այլ պարզ հրապարակագիր մը, կրցաւ աւելի ազդեցիկ ըլլալ քան հոգեւորականներն ու փարթամ աշխարհականներն :

Սովի միջոցին եկեղեցականութիւնը

բան մը չկրցաւ ընել : Կրթական ուրիշ ընկերութիւններու համար Կաթողիկոսի կողմէն հանգանակներ հանեց . ժողովուրդը բան մը չտուաւ : Երեսօղէմի պարտքին համար երբ հանգանակութեան ձեռնարկուեցաւ բան մը չգոյացաւ, վասն զի Մշակ երկու րեք տողով հակառակեցաւ այդ հանգանակութեան : Պոլսեցի պերճախօս վարդապետ մը ներսէս Պատրիարքի յանձնարարականով, Կաթողիկոսի կողմէն սխառ հանգանակութիւններ ընել 1879ին ի Կովկասի վարդապետի Մշակի մէկ հակառակ յօդուածը բաւական եղաւ արգելելու այդ հանգանակութիւնը :

Ինչ որ կ'ընէ Արծրունի ժողովուրդը դայն կ'ընէ : Ինչո՞ւ : Վասն զի ժողովուրդը գիտէ թէ այդ անձն անկեղծ է, ուղղամիտ է, ո'չ կը խաբէ, ո'չ կը դաւէ : Անոր խելքին վրայ ալ մեծ վստահութիւն ունի : Հեռուտես և խելացի առաջնորդ մը ըլլալուն հաւատացած է :

Մշակի դրամական ծառայութիւնները դարմանք պատճառեցին մինչեւ իսկ Բեքրապուրկի թերթերու . Կովկասի մէկ այլ կիւնը հրատարակուած հայ թերթ մը կոչում կ'ընէր հայոց կրնար այնքան տուր հաւաքել որքան գուցէ չէին կրնար հաւաքել Բեքրապուրկի թերթերն : Այդ բերելով ուշադրութեան արժանի համարուեցաւ :

— — —

Հայոց գաղափարները վերանորոգելու հայ խմբագրութիւնը յարգելի և ազդեցիկ ընելու կոչումն ունէր Պ. Արծրունի : Հրապարակագիր ու լրագրագետ եղաւ թէ պարագայներու բերմամբ այլ ներքին միութեան ու խորին մտածութեան արդիւնքով : Զօրապետի մը զաւակ էր, Գրիգորի համալսարանի մէջ կրթուած, իր ջանքով և բաց էր պատիւներու, փառքերու չափի տապարէզն, այլ սակայն երիտասարդ Գրիգոր Արծրունի խմբագրութիւնը խաղաղութեան համարեց ամէն փառքեր ամէն պատուի, ամէն շահի :

Հայրը, զօրապետ Երեմիա Արծրունի խմբագրեց զաւակին այս գաղափարին սակայն յետոյ ըսաւ « յաղթեցիր, դուրս » : Հայրն իր աչքով տեսաւ փառքն ու զօրութիւնը : Ամբողջ վուրդ մը կը յուզուէր Մշակի անուան Գրիգոր Արծրունիի անունը սիրոյ և տեղի :

լուծեան առարկայ մըն էր. ինչ որ ալ բլբլ օրուան անունն էր ամենուն բերնին մէջ, բայց վաղանցուն էր այդ ժողովրդական յուզումը: Հաստատ կուռանի մը վրայ կը գործէր Արծրունի: Զօրապետը ոչ երբեք այդպիսի ժողովրդականութեան առարկայ եղած էր, ինչպէս նաև ուրիշ ոչ ոք իրեն յայտնի անուններէն: Մշակ նմանցունքին գարնան արեւին որ կ'եռէ, էփէ, իրար կ'անցնէ թմրած թմրած մըրփիւնները. այնպէս ալ յուզեց, տակն ու վրայ ըրաւ Մշակ հայոց մտքերն ու սըրտերը:

Մշակ իր յաղթանակը պարտի ինչպէս որ գաղափարներուն ու հոգիին նայնպէս նաև իր լեզուին: Իր պարզ, հասկնալի, խորովի լեզուովը կրցաւ Մշակ տիրել ժողովրդին: Քսան տարի առաջ թէ՛ Արա-նատ-կովկասեան հայերն, թէ՛ Ռուսաստանի հայերը հասած էին այն լեզուական յառաջադիմութեան զոր ըրին յետոյ, յառաջադիմութիւն մը որուն նպաստեց Մշակ:

Գիւղերու ու գիւղաքաղաքներու մէջ այն ատեն պարսկական բառերն ու բառապաշարներն ամէն բերաններու մէջ էին, գլխաւոր քաղաքներու մէջ վրացե-լէն ու Ռուսերէն ընթացիկ լեզու կը հա-մարուէին: Պ. Արծրունի չուզեց որ իր թերթը զսուի, մաքրուի ժողովրդական լեզուի օտարոտի բառերէն. իր նպատակը գաղափար տարածել էր, և իբր գործնա-կան մարդ պէտք էր որ ընտրէր այն գործիք, որու միջոցաւ կարող էր ապահովա-րար հասնիլ իր նպատակին: Մշակի լեզուն հասկնալի էր. ժողովուրդը չխտչեցաւ. սկսեց կարգաւ այդ թերթը:

Մշակ կարգաց նաեւ այն դասակարգ-այր ղուսերէն կարգալու վարժ էր: Այդ դասակարգ գտաւ հայերէն թերթի մը մէջ այնպիսի բառեր ու բացատրութիւն-ներ որք քաղաքակիրթ ամէն լեզուներու պոփոխական եղած են: Ինչո՞ւ չկարդալ հայերէն թերթ մը որ անսովոր ու տար-օրինակ լեզու չունէր:

Եւ երբ Մշակ սկսաւ բարեփոխել իր լեզուն, ժողովուրդը վարժած էր Մշակ վարդալու. այդ բարեփոխուած լեզուին ընտելացած էր: Այդ ժամանակամիջոցին Բարատ-կովկասեան հայերն յառաջադի-մած էին հայերէն լեզուի մէջ:

Այս եղանակաւ զարգացած էր Արա-րատ կովկասեան գրականութիւնը: Արու-եան ազգի սրտի հետ խօսեցաւ իր վերստի ժողովրդի բարբառով. Գամառ-Քաթիպան ալ խօսեցաւ ազգի սրտի հետ նոյն ժողո-վրդի լեզուով. բայց շատ բարեփոխ-ուած:

Իր լեզուին հետ միասին Արծրունի ցնցեց ընթերցողն իր ոճով: Սուր, կարծ, կարուկ պարբերութիւններ, հրացանի գնդակի պէս ցատքող: Եւ այդ ոճի տէր խմբագիրն հրամայող էր: Մանուածապատ դարձուածքներէ, տարակուսական դա-դափարներէ խոյս կուտար: Ինչ որ կ'ըսէր հաւատարմով կ'ըսէր. ժողովուրդը իր ե-տեւէն կ'երթար: Պ. Արծրունի կը նմանէր զօրապետի մը որ գիտէ թէ՛ զինուորն իր ետեւէն տանելու համար պէտք է անոր հետ վտահօրէն խօսիլ և ոչ թէ երկիւղով ու թէ՛ ութեամբ:

Այսպէս զինուած խմբագիր մը կա-րող էր մարանչիլ ազգի ամէն թերութիւն-ներու դէմ: Պ. Արծրունի իրեն նշանա-բան ըրած է՝ աշխարհիս ամէնէն մեծ և ամէնէն իմաստուն հայրենասէրներու պատ-ուէրը՝ թէ՛ ազգ մը իր պահասութիւններն անաչառ քննադատելով կը զարգանայ և կ'ապրի:

Շատ խիստ, շատ համարձակ լեզուով Պ. Արծրունի քննադատեց ու կը քննա-դատէ հայ ազգի միլիթիւններն ու նա-խապաշարումներն. այդ քննադատու-թեան արդիւնքն եղաւ որ նոր սերունդը ուրիշ բարքերով, ուրիշ գաղափարներով կը յառաջանայ:

Մշակի թշնամիներն գոչեցին թէ՛ Մշակ կը կործանէ ազգի տունը, Մշակ կը քան-դէ հայ եկեղեցին, անաչառ քննադատ հանդիտանալով: Այդ ազդակներուն հայ աղքը անտարբեր մնաց զգալով որ անա-չառ քննադատ մը երբեք ազգի թշնամին չէ, և քննադատութիւնը փրկութիւն է:

Ի զուր ազդակեցին թէ՛ ռուս ժողո-վուրդը տեղեկանալով Մշակէն հայոց ազ-գի խոշոր պահասութիւններն ա'լ այնու-հետեւ արհամարհանքով կը վերաբերի դէ-պի հայերն: Այնպէս չեղաւ. մեծ ազգ մը միշտ համակրանքով կը նայի փոքրիկ ժո-ղովուրդի մը վրայ, որ հետամուտ է ինք-

զինքն ուղղել Բարոյապէս այն ազգը կը զարգանայ որ իր թերութիւնները շու կը քննէ :

Երբ անողոք է Մշակ իր քննադատութիւններու մէջ, անողոք է նաեւ երբ յարձակումն հայոց դէմ օտարէ կուգայ . այդ յարձակումներու պահուն հայ ազգի էն արի և էն խմաստուն ակոյեանը Գրիգոր Արծրունի է :

Եկեղեցականներու նկատմամբ խիստ քննադատութիւնները չմատնեցին հայ եկեղեցիի : Եկեղեցին կը քանդի երբ ժողովուրդը կը ցրտանայ իր եկեղեցականներէն : Այդ ցրտութիւն առաջ կուգայ եկեղեցականներու անբարոյական վարմունքէն : Խմբագիր մը որ կը ձողիէ այդ անբարոյականութիւնը, կը սարսափեցնէ եկեղեցականութիւնը և կը հարկադրէ Քրիստոսի պաշտօնեայները չըլլալ դայթակղութեան քարեր, այդ խմբագիրն եկեղեցւոյ ճշմարտ բարեկամն է :

Մշակի խմբագիրը կարող եղաւ իր շուրջը բոլորել դրական շատ մը ոյժեր, և աջակցութեամբ այդ ոյժերու յուզել ամէն կարգի խնդիրներ, դարի տալ գրականութեան, սիրելի ընծայել գեղարուեստը :

Ինք խմբագիրն օգտուած է գրագէտի առաջնակարգ յատկութիւններով : Պ. Արծրունի յօդուածներն լեզուագիտական, գեղարուեստական, գրագատական, իմաստասիրական, նկարագրական, երգիծաբանական, կը կրեն զարգացեալ մեծ մտքի մը անջնջելի գրողմը : Երբեք Պ. Արծրունի չհրատարակեր հասարակ յօդուած մը . ամէն մէկ յօդուած որ իր գրողէն կ'ելլէ հոծ է խմաստով, հրապուրիչ է ընթերցողին համար :

Չեմ գիտեր թէ անհրաժեշտ է խօսիլ նաեւ խմբագրին անձնաւորութեան վրայ :

Պ. Գրիգոր Արծրունի միշտ խորին տըղաւորութիւն կը թողու անոնց վրայ որ զինքը կը տեսնեն : Անկախ, վեհ, անկեղծ, աներկիւզ, այս է իր նկարագիրն . ինչ որ է իր գրութիւններու մէջ, նոյնն է իր անհատական կեանքին մէջ :

Մշակի խմբագրին հետ խորին ակնածանօք կը վարուին, ոչ միայն հայերն այլ

եւ օտարականներն : Թիֆլիզի մէջ ռուս, վրացի, լեւորուացի, ամէնքն ալ կը մեծարեն հայ խմբագիրն ու կ'ակնածին իրմէ : Պ. Արծրունիի վեհ ընաւորութեան շնորհիւ ի կողմաս հայ խմբագրի տիտղոսը մեծ շքանուն կը համարուի :

Մի օր զօրապետ Լազարէֆ տեսակցելով Պ. Արծրունիի հետ կ'ըսէ ,

—Ես սուրովս, դուն գրչովդ գործ կը տեսնենք :

—Սուրը կը ժանգոտի, բայց գրիչը ոչ, կը պատախաճէ խմբագիրն ահռելի դիպագին :

Այս բացատրութեան մէջ է Արծրունի գրիչն ամէն ոյժէ գերազոյն համարել և խմբագրութիւնն ամէն փառքէ բարձր :

Ինչպէս ըսի, ինձ կ'արելի չէ այս անձուկ էջերուն մէջ այնպէս գրել Պ. Արծրունիի մասին ինչպէս որ պէտք է գրել, համառօտ գաղափար մը միայն տուի Մշակի և անոր խմբագրի վրայ :

Արդէն Մշակ մեր մէջ ժողովրդական է . մեզ միայն Մշակ կատարելապէս ծանօթ է . Արարատ-Կովկասեան հայոց սիրան ու ոգին Մշակի հետ է, այդ գիտենք ամէնքս ալ :

Մշակ հեռուէն կը մասնակցի այն ջերմ համակրանքին որ մայիս 6ի կիրակի օր ի Թիֆլիզ փառաւոր հանդիսիւ պիտի կատարուի : Թուրքիոյ հայոց քառասնամեայ թերթն իր շնորհաւորութիւնները սիրալիր յարգանքով կ'առաքէ առ մեծ հրապարակագիրն Գրիգոր Արծրունի :

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Շնորհակալութեամբ ստացանք «ՊԱՏ. ԿՆՐ» հանդէս կիսամսեայն որ կը հրատարակուի տարի 15 և նկատելի հոռմական Հայոց Պատրիարքարանի հովանաւորութեան ներքեւ :

Այս հանդիսի մասին կը խօսինք յաջորդ թուով :

Ա. Զ. Դ.

Ստարադգի երիտասարդ մը, հմուտ ռուսերէնի, որ գիտէ միանգամայն խօսիլ ֆրանսերէն եւ գերմաներէն, պատրաստ է ռուսերէնի դասեր տալ : Դիմել Արշէնի խմբագրատունը :

ՍԻՆՏԵՆՏԻ ՎԱՐՊԵՏ

Պարզ պատմութիւն մըն է ընելիքս։ Պարզ է բուն բառը չէ։ մտացածին ու երեւակայական գէպերու այնպիսի ընկալեալ գաղափար մը կայ այդ բառին մէջ, որ ճշգիւ չ'համապատասխաներ իմ ներկայացնելիք իրական պատկերին։ Վերջ ու սկիզբ չունի։ չատերուն ալ հետաքրքրութիւն չ'ազդէ գուցէ։ Մեր ընտանեկան խոնարհ յարկերու մէկ պարզ դրուագքն է. ու եթէ բանի մը չ'ծառայէ, գէթ գաղափար մը կուտայ թէ չքաւոր ընտանիք մը ինչ միջոցներով կ'ապրի կ. Պոլսոյ մեր այլապէս հայ ընկերութեան մէջ։

Իրկանը նամակին վրայ, կարինէն ելեր Պոլիս եկեր էր Մարիամ տուտուն չորս զուկներովը, երեքը աղջիկ ու մէկը մանչ։ Յակոբ ազան հինգ վեց տարիէ ի վեր իր քաղաքէն Պոլիս պանդխտած, խառնածութիւն ընելով կը ճարէր իր ապրուստն ու աւելցուցած դրամը կը զրկէր հայրենիք, ամէն ամիս տնդ դառնալու յուսով։ Ամիսներն ամիսներու յաջորդէր էին, տարիներն ալ եկեր անցեր էին հետգհետէ, և Յակոբ ազան, տեսնելով որ դժուար պիտի ըլլայ իր գործը թողուլ և սրտին մէջ տակաւ աւելի բուռն գիտելով կարօտն իր կնոջ և զուկներուն, որոց կրտսերագոյնին երեսն իսկ տեսած էր դեռ, Պոլիս կանչած էր զանոնք։ Խեղճ մարդը երկար տառն չալտի վայելէր այդ երջանկութիւնն որ տարիներով իր երազները խռովեր ու իր սրտին առօրեայ հնչնուքն էր եղեր։ Կնոջն ու զուկներուն Պոլիս հասնելէն երեք չորս ամիս ետքը, ժանտատենդը առեր տարեր էր զինքը, գերեզմանին մէջ գտնելու այն հանգիստը զոր ի զուր որոնէր էր աշխարհիս վրայ։ Իր վերջին վայրկեաններու մտածումը իր ընտանիքին վիճակն եղած էր. խեղճ Մարիամը ինչ պիտի ընէր իր չորս զուկներով, այս մեծ քաղաքին մէջ ուր ոչ ոք կը ճանչնար և ուր յանկարծ կը մնար անօգնական և միմաւորիկ։

Առջի մէկ քանի օրուան ցնցումէն ետքը, Մարիամ տուտուն ինքզինքը ժողկեց։

Գաւառացի կնոջ այն կորովի և հաստաաբնաւորութեամբ, որ տարակայ պանդխտին տունը կանգուն կը պահէ գաւառացի մէջ, սրտին խորը թաղեց իր վիշտը, արցունքը սրբեց և դործի սկսաւ։ Իր մեծ տղան, Մկրտիչը, որ տասներեք տարու կար, քաջեց հանեց թաղային վարժարանէն և Էպիֆանի մը քով տուաւ, որ իրենց դրացի էր։ Շաբաթականը որոշուեցաւ հինգ դրուչ։ Թէ՛ մօրը և թէ՛ տղուն ծանր եկաւ վարժարանէն այս յանկարծական բաժանումը։ Մարիամ տուտուն, առանց որոշ գաղափար մը ունենալու կրթութեան վրայ, կարծիք կազմած էր թէ իր գաւառը գրեւ-կարգաւ գիտնալով միայն պիտի կրնար ճշմարիտ նեցուկ մը ըլլալ իր ընտանիքին։ Զարմանալի է արդարեւ թէ կրթութեան կարեւորութեան մտածումն ինչ խոր արմատ կապած է հայ ընկերութեան ամենայնպէս խառնուած մէջ իսկ. ամէնէն չքաւոր Հայը, պալէսթին թէ Բալթիկ, իրական ցաւ մը կ'ունենայ իր գաւառը վարժարանէն քաշած հանածո ատեն, և դպրոցական թուղակին դժուարութիւնը կամ իր գաւառին մէկ քանի դրուչի շահը միայն կ'արդարացնէ զինքն յաջս իրեն և օտարներուն։ Մեր մէջ, կրթութիւնը պարտաւորիչ ընելու օրէնքի մը պէտքը չալտի ունենանք բընաւ, գէթ ծնողաց համար. կարողութեան տէր ամէն հայ իր գաւառը վարժարան պիտի տայ. տարբեր բան է թէ տղան բան մը չալտի սովորի հոն, և մէկ երկու տարի իր գլուխը բթացնելէ յետոյ քան քան հոլովելով, օր մը մէկգի պիտի նետէ գիրքն ու դրիչը և իր արեանը մէջ գգալով յանկարծական յոյզն այն անկախութեան և ազատութեան տենչին զոր հօրմէն ժառանգեր և ապրած միջավայրէն ընդունել է, ծովեզերք պիտի վազէ գայլախաղներուն հետ խաղալու բոբիկ ոտուկներով կամ սխրանօք պիտի դիտէ ջրհանին սրարչաւանքը՝ կաշմուռն թեւերու վրայ համբարձիկ։

Մարիամի երկրորդ գործը եղաւ տունը փոխել։ Երկու սենեակով տուն մը կը նստէին, ամառական երեք մէճիտի։ Ինք խրճիթի պէս բան մը վարձեց որ մէկ ընդարձակ սենեակ ու պղտիկ խոհանոց մը ունէր. տախտակամածներուն բացուած-

քէն երկինքը կը տեսնուէր ու հովը անարգել կը մտնէր կ'ելլէր ամէն ծակ ու ծուկէ . բայց հանգիստը նայելու ժամանակ չէր, «գլուխը խոթելու տեղ մը ունէր», կը բաւէր իրեն, մանաւանդ որ ամսական վարձքը երեսուն զրուշ էր միայն:

Իր էրկանը ժառանգութեամբն զբաղեցաւ ապա: Յակոբ աղան բան մը չէր թողուր իր այրիին և զաւակաց, բայց եթէ իր վարձած սրճարանին ակոռակները, մէկ քանի կոտրած թիկնաթուղները, աղտոտ սեղաններ, մէկ երկու երկոստան ետակ թաս ու գաւաթ՝ իւրաքանչիւրը տարբեր տարբեր տեսակէ, մէկ քանի գունատ պատկերներ ճանձնելու բիծերէ արատաւորեալ շրջանակներու մէջ, որք Ռուսիոյ կայսրը կամ Եոթկիոս թագաւորը կը ներկայացնէին՝ իր կնոջն և զաւկներուն հետ, վերջապէս խեղճուկ սրճարանի մը բոլոր կահ կարասիքը: Այդ ամէնը աճուրդի հանեցին, և Մարիամի ձեռքն երկու հարիւր զրուշ անցաւ:

Այդ երկու հարիւր զրուշը՝ ամիս մը հազիւ կրնար բաւել իրեն: Պէտք է որ ինքն ալ գործի ձեռնարկէր լրջութեամբ: Կար կարել չէր գիտեր որ օրական մէկ քանի զրուշ ճարէր: Ուրիշ բան չէր կարող ընել բայց եթէ լուացարարութիւն, և թաղին մէջ շուտով գտաւ մէկ քանի յաճախորդներ: Առջի օրը ամէն կողմէ յանգիմանութիւններ լսեց իր անճարակութեանը համար. «աղաքան լաւ չէր կրնար ընել»: չէին համար, շիտակը, խօսք չկար. իր ջղուտ ու գորաւոր ձեռուններուն մէջ լաթը կը ճգնուէր ու կը ձմլուէր, ու մէկ քանի վայրկեանի մէջ ձիւնի ձերմակութիւն մը կ'ստանար: Բայց քիչ քիչ վարժուեցաւ. տան տիրուհիները գոհ էին իր անխօսակ աշխատասիրութենէն, մաքուր թենէն և մանաւանդ եռանդուն տոկունութենէն, որով մութին գործի կ'սկսէր և մութին կը վերջացնէր: Բերնէ բերան կը տարածուէր իր համբաւը, ու շատ տեղերէ կուգային կը փնտրուէին զինքը:

Իր մեծ աղջկանը թագուհիին համար ալ պէտք էր բան մը ընել. տասներկու տարեկան էր և արդէն ընտանեկան գործերու մէջ իր մօրը աջ բազուկս. երբոր մայրը լուացքի կ'երթար, ինք իր տա-

նամեայ քրոջը հետ կը հսկէր իրենց պղծտիկ եղբօրը վրայ, երկու տարեկան հաստ ու կարմիր մանչ մը, ու վերէն վար կ'աւելէր կը սրբէր: Եւ սակայն չէր կրնար այդպէս մնալ մինչեւ վերջը: Մարիամ գնաց գտաւ «խէն» բանոյ համբաւաւոր կին մը, որ իր քով պղտիկ աղջիկներ կ'առնուր, և աղաչեց որ իր աղջիկն ալ աշխատութեան ընդունի: Թէպէր հանրմը չէ չըսաւ. մինչեւ որ թագուհին «վարպետ ելլար», իր բանածը իր տիրուհւոյն հաշուոյն էր: Իրաւ է որ տանը մէջ մեծ պակաս մը պիտի ըլլար իր ցերեկեայ բացակայութիւնը. բայց իր երկրորդ աղջիկը կը բաւէր հսկելու համար մատաղատի մանչուն վրայ, իսկ տանը գործերը՝ առտունները և իրիկունները կրնար կարգադրել:

Մարիամ գործերը այսպէս կարգադրելէն ետքը, ակռան սեղմեց ու... ապրեցան: Ամսական իրարու վրայ հարիւր զրուշ կը շահէր լուացարարութեամբ: Մկրտիչ, մէկ երկու ամիս ետքը, շաբաթական տասը զրուշ կ'առնէր, և ցերեկին տասը փարայի հաց ու տասը փարայի պանիր կամ ձիթապտուղ ուտելով, մնացեալ եօթը զրուշը կը բերէր մօրը կը յանձնէր շաբաթ երեկոյին: Տանը վարձքը վճարելէ յետոյ, իրենց կը մնար հարիւր զրուշի չափ: Ամէն շաբթու գլուխ, քսան օխտ հացը մէկէն կ'առնէին, օթեկ հաց, հատը երեսուն փարայի, և շաբաթ մը կ'ուտէին զայն. չոր հացը քիչ կ'ուտուի, խնայողութիւն մըն է. հացին հետ սովորական խմելոց էր պանիր կամ ձիթապտուղ, այն ալ գիշերները միայն. առտունները ջուրի մէջ թաթխելով կ'ուտեն զայն. եթէ երբեմն խաշած լուբիա ունենային, հարկինք մըն էր իրենց համար: Տղայոց հագուստներուն համար բարեպաղաքար ծախք մը չունէին. բարեսիրտ տանտիրուհիներ Մարիամի կուտային հին կոշիկներ, մաշած շրջաղբեստներ, ներբանէն և քիթէն ծակած դուլպաներ, զորս մայր ու աղջիկ կը ձեւէին կը յարմարցնէին իրենց և պղտիկներուն: Իրենց հագուստները հին էին, բայց պոտոտած մը կամ քաղուք մը չկար վրանին: «Ապրանք» չէր այս, գիտէր Մարիամ՝ տուտուն, բայց ի՞նչ ընէր, ձեռքէն ի՞նչ կուգար. եթէ կարենար, ամէն օր լուացքի կ'երթար. իր վաստկած օրա-

կան տասը զրուշովը, ամսական երեք հարիւր զրուշով, «վարդի պէս կրնային ապրուիլ»։ Բայց գործը ուր էր ամէն օր։ Տունը մնացած օրը երբեմն խաւս կարեր կը կարէր, օրական վաթսուն փարայի չափ շահելով, և անով կը գնէր ածուխը կամ կաղը։

Ընտանեաց բոլոր յոյսը Թագուհիին վրայ էր։ Թէպէտ տուտուն կը խոստովանէր թէ իր բոլոր աշխերտներուն մէջ ունեցած չէր այդչափ աշխատասէր ու բանիրուն աղջիկ մը։ Եթէ ասանկ երթալու ըլլար, տարիէ մը վարպետ կ'ելար։ Սէպէտէ վարպետ․ այս էր իրենց երազը, մայր ու աղջիկ շատ գիշեր գլուխ գլխի տուած կը մտածէին այն հանգստութեան օրերուն վրայ զորս պիտի վայելէին այդ զգացեալ տիտղոսին ստացումէն ետքը։ Սիւզէնի վարպետ։ Լաւ բանող մը, եթէ մանաւանդ «Բլա» բարձեր շինէ, կրնայ դիւրաւ օրական հինգ զրջ վաստկիլ․ սովորաբար, եթէ այդքան դժուար գործեր չ'բանի, երեք զրուշ կամ հարիւր փարա կրնայ շահիլ․ իրաւ է որ առջի շահերը մնացած չեն, շատ բանողներ ըլլալուն համար գիները կտրած են, բայց դարձեալ Թագուհիին պիտի կրնար հարիւր զրջ շահիլ ամիսը և այն ատե՛ն․․․

Սէպէտէն տեսակ մը ասեղնագործութիւն է բաւական տարածուած, որովհետեւ ֆէպէտ և անգլիէյն աւելի դիւրին է։ Սիւզէնիով կը բանին ընդհանրապէս բարձեր, ծածկոցներ, շրջագդեստի քղանցքներ, «բայով, իգէտով, կլապով, կերպասի վրայ, Պրուսայի բարակ կտաւի վրայ։ Մայրաքաղաքիս մէջ բաւական յարգի է, այլ աւելի շատ կը զրկուի Նգիստոս, Սուրիա, և քիչ շատ ալ Ներսիս։ Փայտի մազի մը վրայ կ'անցունեն կերպանը, կարկահի մը պէս ձգտելով, և յետոյ բանողը, ցուցամատին մետաղեայ Բոնաի մը անցուցած, իր յատուկ ասեղովը, որուն ծայրը կեռ է, կը հիւսէ թելը։ Սիւզէնիին տուտելութիւնը այն է եւրոպական գործարաններէ ելած նմանօրինակ տրտագրութեանց վրայ, որ, օրինակի համար Բել վարագոյրներուն վրայ՝ ասեղները ամբած են, մինչ ձեռքով բանուածին մէջ՝ Բասաի կը զարնուի, այսինքն ուլունքի պէս հիւսքերը հատիկ հատիկ են։

* * *

Տարին անցաւ այս խեղճութեան ու այս յոյսերուն մէջ։ Մկրտիչ շաբաթական մինչեւ երեսուն զրուշ կը «շտկէր» հիմակ, Մարիամ ալ աւելցուցած էր իր յաճախորդներուն թիւը, բայց հանգստութիւնը պիտի գար Թագուհիին վաստակին հետ մէկտեղ։ Եւ այդ օրը կը մօտենար հետգհետէ․ Թէպէտ հանրմը յայտարարած էր թէ Թագուհիին արդէն վարժուած էր իր արհեստին և շատ չանցած վարպետ պիտի հանէր դայն։

Բաղձացեալ օրը եկաւ հասաւ վերջապէս․ շաբաթ իրիկուն մըն էր որոշուած, «վարպետ»ի տիտղոսը Թագուհիին տալու ձեւակերպութեանց բոլոր արարողութիւններն սկսած էին․ այն իրիկուան համար, «գուռ դրացին» հրաւիրուած էին։ Մարիամ, ամէն կերպ զոհողութիւն յանձն առնլով, շաբաթ առտուընէ ալիւրով հէլա մը կոխած էր և սերկեւիլի անուշ պատրաստած, զոր հիւրերուն պիտի հրաւիրէին։ Մկրտիչ ալ իր ընկերներէն տղայ մը պիտի բերէր, որ լաւ «բանի» կը զարնէր։

Իրիկուան իրենց ճաշը կանուխ ըրին։ Հրաւիրեալները հետգհետէ կուգային, դրացի պալէթի համբարձում ազան իր կնոջը և զաւկներուն հետ, Էպիսկոպոս Սեփոն աղային ընտանիքը․ Էպիսկոպոս աղային ընտանիքը և ուրիշ մէկ քանի կիներ։ Թէպէտ հանրմը էն վերջը եկաւ, և բազմոցին անկիւնը բազմեցաւ, ակնոցը հանեց քիթը անցուց, սիկառէթ մը բոլորեց և սկսաւ ծխել։ Կ'զգար իր կարեւորութիւնը, գիտէր թէ իր մէկ այո՛ն կամ ո՛չը ի՛նչ ահեղ նշանակութիւն ունէր այդ գերագոյն վայրկեանին, ուստի խորխորութեամբ բազմած՝ արհամարհական նայուածքներ կը նետէր չորս կողմը։ Սենեկին մէկ անկիւնը, դրան մօտ, աթոռակի մը վրայ, Թագուհիին կիկտած նստած էր, սպասելով այն հանգիստաւոր վայրկեանին, յորում բոլոր ներկայք, դատաւորի պէս, իրենց վճիռը պիտի տային իր վարպետութեանը մասին։ Իսկ սրահին մէջտեղը սեղանին վրայ, մաղը դրուած էր, կերպասին տակ ծածկուած, որուն վրայ, պիտի կատարուէր փորձը։

Անուշը բերին, թիթեղեայ ափսէի մը

մէջ չորս արծաթ դգալներով զորս Մարիամ իր բարեսիրտ յաճախորդներէն մէկէն փոխ առած էր: Զորս դգալը չէր օգտեր այդչափ բաղմունքեան, ուստի Մարիամ տուտուն մէկ կողմէ դուրս կը տանէր կը լուար աղտոտ դգալները ու նորէն կը բերէր: Թահուէն ալ երկու անգամէն բերուեցաւ:

Յետոյ խնդրեցին Մկրտիչին բարեկամէն որ բան մը չալէ: Տղան նախ աշխարհէն մը ըրաւ, յետոյ հեղափոխութեան սը նըւագեց: «Ապրիս, ափէրիմները» չորս կողմէն տեղացին:

Վճռական վայրկեանն հասած էր: Թէպէր հանձնը տեղէն ելաւ յամբարար, ակնոցը չալեց, սեղանին մօտեցաւ, մաղը ձեռքն առաւ և Թագուհին դառնալով,

— Եկո՛ւր նայիմ, աղջիկս, արեւելէի գուցուր:

Թագուհին դողդալով մօտեցաւ, Բագուհի մատն անցուց, ասեղը ձեռքն առաւ, աթուռի մը վրայ նստաւ և ծունդերուն վրայ զետեղեց մաղը: Զգտեալ կերպասին վրայ, ծաղկանց հիւսնալի նկար մը հիւսուած էր, որուն մէկ ծայրը վարդի մը գիծերը միայն բաց մնացած էին, զորս Թագուհին պիտի լեցնէր: Նորատի աղջիկը գործի սկսաւ, Թէպէր հանձնը նորէն իր տեղն անցաւ, հրաւիրեալք մէկ երկու վայրկեան ուշադրութեամբ դիտեցին ասեղին ելեւէջը, յետոյ ասեղին դարձան, մտիկ ընելու արեւելին մէկ նոր նուագը, տաճկերէն երգ մը, որուն հիմա կը ձայնակցէին Մկրտիչը և ուրիշ մէկ քանի տղաք:

Կէս ժամ յետոյ, վարդը աւարտած էր. ամէնքը մէկէն իրենց տեղէն ելան և եկան սեղանին շուրջն հաւաքուեցան. հաւանութեան և հիացման ձայներ չորս կողմէն կը լսուէին:

— Ապրիս, Բագուհի, կ'ըսէր Համբարձում աղան, ապրիս, Էլիս ևս քեզի վարպետ հանեցի, մէկալներուն խօսք չիյնար:

— Վո՛ւյ, խերը տեսնաս հէմէն, Մարիամ տուտու, կ'ըսէր անդիէն ուրիշ կին մը, աս ի՛նչ ալլըման հիւսուածք. պանահալի պէս փառ փառ կը վառի:

Թէպէր հանձնը տեղէն չէր չարժած. մաղը անոր առջեւ տարին. ակնոցը նորէն դրաւ և ուշադրութեամբ սկսաւ դիտել

բանուածքն. ամէն ոք անոր բերնէն կախուած կը մնար. և ահա ծանր ճոյնով արտասանեց նուիրական բանաձեւը.

— Էյ ապրիս, Բագուհի վարպետ եղար, մարդ խերդ տեսնայ, սա ծառքս պագ նայիմ:

Թագուհին, ուրախութեան կաս կարմիր կտրած, ծռեցաւ անոր ձեռքն համբուրեց, և անմիջապէս դուրս ելաւ՝ որպէսզի հիւրերուն հրամցուելիք հեղին բերէ, մինչդեռ սենեկին մէջ ամէնքը կը գովէին իր ճարտարութիւնը և աշխատութիւնը:

Հեղին բերուեցաւ մէկ երկու սկաւառակի մէջ, և մէկը ուտելուն աւարտելուն պէս, սկաւառակին մէջ նորէն կը լեցնէին և ուրիշի մը կը հրամցնէին: Յետոյ նորէն Բագուհի ձայնը լսուեցաւ, նորէն երգ, և կամաց կամաց սկսան մեկնիլ: Մկրտիչ լապտեր մը ի ձեռին ընկերացաւ Թէպէր հանձնին մինչեւ իր տունը. իր թեւին տակ լաթի մը մէջ փաթեցուած խոշոր բան մը կար. «Վարպետէքն» էր այդ, այսինքն Թէպէր հանձնի տրուած նուէրը. սովորաբար վեց արծաթ դգալ է այդ նուէրը, բայց Թէպէր հանձն, գիտնալով Մարիամի վիճակը, հաւանած էր ընդունելու մեծ Բագուհի մը, սան մը, զոր հիմա Մկրտիչ թեւին տակ կը տանէր:

Նրբ ամէնքը մեկնեցան, կրկնելով իրենց «խերը տեսնաս» ու իրենք իրենց մնացին, Մարիամ գիրկն առաւ իր աղջիկը, կաթողին սեղմեց զայն իր նիհար լոնջքին վրայ, ու արցունքի կաթիլներ իր այտերն ի վար սկսան դնիլ, այս անգամ սակայն գոհունակութեան արցունքներ՝ որք իր քաջուած դիմագծերուն անձառ երանութիւն մը կը պարզեւէին:

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

Եղիպտոսէն կը հաղորդեն թէ երիտա-
սարդ արուեստագէտ Պ. խօսքանց մեներ
է թոքատապի ըրանդութենէ :

Տարաբաղդ երիտասարդը ժամանակ
չունեցաւ իր տաղանդով հանրածանօթ ըլ-
լալու , բայց իրական տաղանդ ունէր :
Պատկերհան էր և գրող : Գեղարուեստից
մէջ ջրաներկն ընարած էր և շատ յաջո-
ղութիւն գտած . իր արուեստը սովորած
էր Իտալիոյ մէջ , և իր նկարներն՝ ընդ-
հանրապէս Եւրոպացիներէ գնահատուած՝
Եւրոպացիներու քով կը գտնուին : Իբր
գրող , բանաստեղծութիւնը կը մշակէր եւ
բաւական յաջողութեամբ . իր մեղամաղձոտ
հոգւոյն յոյգերը կը գնէր այդ տաղերուն
մէջ զորս իրեն կը պահէր՝ վեհերոտ ար-
ուեստագէտի ետաքրութեամբ . իրմէ կը
հրատարակենք հետեւեալ բանաստեղծու-
թիւնն , որ կրնայ գաղափար մը տալ հան-
գուցեալ երիտասարդին արժանեաց վրայ :

ԳԻՇԵՐ ՄԸ Ի Կ * * *

(ՅԻՇԱՏԱԿ)

Հոն ուր նեղոս նիրհէ խաղաղ՝
Արմաւենեաց շուքին տակ
Եւ ուր միայն հծծեն նըւաղ
Քաղցրաշունչ հովն ու ալեակ ,
Գարնան գիշեր մ'էր գեղավճիտ ,
— Ո՛հ , գեւ յիշեմ գիշերն այն , —
Երկին տեղար շոյ ու ժըպիտ
Ջրի , մարգի , ծաղիկ վրան ,
Եւ որպէս կոյսն ի հայելոյ՝
Լուսին ծագած գեղալոյս
Ձինջ գետին մէջ դիտէր դողդոջ
Իւր պատկերը տրամանոյշ . . .
Հոն ի գետափն էինք նստած՝
Յափըչտակուած ու լըսին ,
Ներա աչկունքն էին սուգած
Յանհունութիւնն այն խորին .
Մերթ դիտէր գետը կապուտակ
Ի անծայրածիր հորիզոն ,
Մերթ երկին ջինջ և անյատակ .
Զոնչ որոնէր արդեօք հոն . . .
Այլ իմ աչկունքն էին յառած
Դէպ յայն հրեշտակ սիրանուէր .
Իիտէի ես ներա աչաց
Դիւթիչ նայուածքն ու կայծեր ,
Այն լոյս ճակատ՝ զոր ծածկէին

Հոյլք հողմածուփ մազերուն ,
Եւ շրթունքներն ոյց ըղձապին
Երբեմն հալի խօլ մեզուն ,
Եւ ներա գիրդ ձեռքն յիմ ի ձեռս՝
Մտախոհ և լըւօրէն՝

Միայն ըզնէ տեսնէի ես
Զքնաղագե՛ղ քան զամէն . . .
Նէ ինձ ըսաւ . «Տե՛ս եթերին
Կապուտագեղ ու ջինջ գոյն ,
Տե՛ս ի՛նչ անոյշ չողայ լըսին՝
Գեղեցկութեամբ փողփողուն .
Լսե՛ս ի՛նչպէս հովն ու ալիք
Եւ զովապիւր տերեւներ
Յանհունութիւնն այս խաղաղիկ՝
Սփռեն աղօտ մրմունջներ : »
— «Այո , երկնի գոյնն այն կապոյտ
Դո՛ղար է , ըսի շնորհալ ,
Այլ ո՛րչափ այն երեւի մութ՝
Աչերուդ քով մեծափայլ :
Եւ լըսինն է գեղաժըպիտ՝

Զիւնաթորմի ամպոց մէջ ,
Այլ նա չ'ունի անբիծ ճակտիդ
Երազներն ու բոցն անէ՛ջ՝
Մրմունջքն ալեաց , տերեւներու՝
Մի նըւագ եւ սրտադրաւ ,
Այլ քու լեղուիդ մի խօսքն աղու՝
Դաշնակութիւն մ'է անբաւ . . . » —
Եւ ի ծունր ի մարգաղետին՝

Ակնապիշ իւր աչերուն՝
Յամբած շրթերս քնքուշ ձեռքին ,
Ո՛հ , հպեցան դողդոջո՛ւն . . .
.

Հոն ուր նեղոս նիրհէ խաղաղ՝
Արմաւենեաց շուքին տակ
Եւ ուր միայն հծծեն նըւաղ
Քաղցրաշունչ հովն ու ալեակ ,
Հոն այժմ աչերս արցունք ցօղեն ,
Սիրտս ալ միտ՝ սգազգեաց ,
Ձի այն սիրոյ հեշտ ժամերէն
Լոկ յիշատակ մ'ինձ մտայ . . .

Կ. ԽՕՄԲԱՆՑ

Դեկտեմբեր , 1888

Գահիրէ

ՊԱՏՈՒՀԱՍԵԱԼ ՕՋԱԽԸ

Բ

Մասիսի մարտ 15ի թիւին մէջ հրատարակուեցաւ Պատուհասի օճախի առաջին մասն, ուր տեսանք թէ՛ պատանին Առաքել Մուրատեանց որ խեղճ ու աղքատ մտնելով Վարդաշէն որդեգրուած էր ուտէացի ընտանիքէ մը, մեծատուն էր իր ծերութեանը: Գտանք Առաքելն յետոյ լքեալ իր սպարանքի սենեակներէն մէկին մէջ. հոն կը խնամէր զնա իր աղջիկը Մարիամ, մինչ նոյն այդ սպարանք էր հանգիստավայր շուայտոտ կեանքի, զոր կը վարէր ծերունիի զաւակը Մկր: Պատմութիւնը չարունակներ:

Առաքել Մուրատեանցի անունը միշտ կենդանի է և սիրելի Վարդաշէնի մէջ: Պարզ ժողովուրդը ապերախտ չէ անոնց որք խնամատար եղած են իր հոգեկան և մարմնական պէտքերուն: Փարթամ Առաքելը չմուցաւ ուխտը զոր կ'ընէր սուրբերուն, ոտքերն արիւնլուայ՝ բրնձի արտերու մէջ դափ կապելու աշխատած տներն:

Հաւատքով աշխատած էր Առաքել. և ոչ խի կարգաւ գիտէր. կրօնքի ապաւինած էր ոչ թէ մտքին առաջնորդութեամբ ըն ալ սրտին բնաղբով: Կատարելապէս տիրար զաւակն է անուս ժողովուրդին որ ամէն ժամանակ կրօնքի կարօտը կը քաշէ առանց իր գիտակցութեանը: Գերազոյն զօրութեան մը փարելու հարկին մէջ է ժողովուրդը. խորհելու և քննելու կարողութիւն չունի ուստի կը հաւատայ:

Հաւատքը մեր մէջ զօրութիւն է որ կը պահպանէ զմեզ, վասն զի ծուլութեան ապաստանարան չէ. ժողովուրդը բնաղբով գիտէ թէ՛ հաւատքը արդիւնաւոր ըլլալու համար աշխատութիւնը պէտք է աւելցի անոր. ժողովուրդային այդ բնաղբական մղումն մղուած էր և Առաքել Մուրատեանց, ու երբ հարստացաւ իր ուխտը կատարեց, վասն զի համոզուած էր թէ ուխտագանցութիւնը պատուհաս կը բերէ:

Չեմ կրնար մանրամասն առաջ բերել Առաքել Մուրատեանցի բարեգործութիւն-

ները: Մեր մէջ աւանդութիւն էր թէ կըրօնական բարեգործութիւնը պէտք է լըռիկ կատարուի, որպէս զի ընդունական ըլլայ Աստուծոյ. այդ աւանդութեան հաւարիմ մնաց Առաքել Մուրատեանց, ինչպէս հաւարիմ կը մնան գաւառական բարեգործներն: Եկեղեցի կառուցանողն Աստուծոյ գրեթէ հաւասարակից համարել, և անոր անունը քանդակել հոն որ միայն Աստուծոյ վերապահուած է, շատ թարմ նորութիւն է: Առաքել Մուրատեանցի ժամանակ մեր կրօնական բարեբերը տակաւին սկզբնաւորութիւն չէին ըրած այս բարեփոխումին:

Կը բաւականանամ յիշատակելով մի քանի գործերն:

Ուխտատեղիներ վերանորոգելու, եկեղեցիներ կառուցանելու նուիրեց իր աշխատութիւններն Մուրատեանց: Եկեղեցի շինողը կամ միսթիք մըն է որ խտէլով մը կը տառապի, և այդ խտէլին գոհացում կուտայ կառուցանելով եկեղեցի ուր կը կեդրոնանայ Աստուծոյ գաղափարը, միսթարանքի սիրտանքի հոգին. կամ՝ հարստացած ոճրագործ մըն է որ կը կարծէ թէ՛ սրտին վրայ ծանրացած կապարը կրնայ թեթեւալ, կրնայ հալիլ եկեղեցիէ բղխած ճառագայթներու ջերմութեան տակ: Առաքել Մուրատեանց կը պատկանէր առաջին դասին: Իր սիրտը յարած էր Վարդաշէնի եկեղեցիին. քսկել տուաւ այդ հնկէկ, մատուռի պէս եկեղեցին եւ կանգնեց մեծ փառաւոր եկեղեցի մը, Սուրբ Աստուածածին անունով: Վերանորոգել տուաւ ճալէտտիի վանքն: Շատ բան պարտական էր Եղիշէ Առաքեալին. այդ ուխտատեղիի վրայ ալ շինել տուաւ մատուռ մը, երկու փոքրիկ խուցերով: Նորոգել տուաւ միանգամ ալ մատուռի ճակատի արձանագրութիւնն որ բաւական հետաքրքրական է և հետեւեալն է.

Քաւէն. Բոյն պէս Եղիշէն առաքելցն է ժամանակ լեալն Սեւան Վարդաշէն. շէնքն «որք Ա. Հ. + Ա. Ռ. Վ. առաքեալն Աստուածողորմ 1811:

Ժողովուրդի հոգեկան պէտքերը խնամած պահուն, մարմնական պէտքերն ալ մոռացութեան չէր տար: Գլխաւոր հոգն եղաւ առատ ջուր տալ Վարդաշէնի:

Ի՞նչ անդիմադրելի հրապույր ունի ջուրը՝ որ ժողովուրդները խանդաղատանքով կը նային աղբիւրի մը վրայ . աղբիւրի վերայ անջինջ կը պահեն զայն շինողին անունը։ Աղբիւր մը շինողն եկեղեցի մը շինողէ վար չմնար, և գերագոյն օրհնութիւն մըն է ըսել «Ջրին բարին արեւդ»։ Այդ օրհնութեան արժանացաւ Առաքել։ Շատ ծախսեր ընելով լեռներէն ջուր բերել տըւաւ Վարդաշէն ուր շինել տուաւ բազմաթիւ աղբիւրներ։

Առանց երկարելու այս մանրամասնութիւններն ըսեմ թէ՝ Կովկասի թերթերն երբ առիթ ունենան յիշատակել Առաքել Մուրատեանցի անունը կ'ըսեն, «Վարդաշէնի երեւելի բարեգործ հոգեսէր և մարդասէր Առաքել Մուրատեանց»։



Մուրատեանցի պատանեկութեան բոլոր երազներն իրականութիւն եղած էին . հարուստ էր, անուանի էր, օճախի հիմնադիր։ Սակայն պատանին բուական չէր համարած իր աշխատութիւնը նուիրել միայն նիւթական բարիքի տիրանալու . գիտէր թէ «մարդ մը» ըլլալու համար մտքի զարգացումն անհրաժեշտ է, ուստի կարգաւ սորված էր, և շատ կարգացեր էր, այնպէս որ կրնար համարուիլ բարոյական հեղինակութիւն մը։ Վարդապետներ ու եպիսկոպոսներ հեռաւոր տեղերէ կուգային, հիւր կը մնային . կը խօսակցէին, կը վիճէին։ Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալեանց իր ճանապարհորդութենէն չ'ազդուեցաւ մէջ կը յիշատակէ Առաքել Մուրատեանցի անունը։

Ամէն գրքէ աւելի կը սիրէր Աւետարանը, զոր կը կարդար անդադար, կը զարմանար գտնելով անոր այն մարդասիրական և ընկերսիրական սկզբունքներ, զորս ինքն արդէն իր մտքովն ու զգացումներովն ունեցած էր։

Ըրած այս գիւտին համար կը զարմանար Առաքել Մուրատեանց . զարմանալու բան չկար։ Ով որ բնածին ազնուութիւն ունի, Աւետարանը արդէն իր մէջ ունի։ Եւ յետոյ երբ ժողովուրդ մը դարերէ ի վեր կրթութեամբ և Աւետարանի ազդեցութեան ներքեւ, իր սիրտն ու մտածութիւններն ալ բարեփոխուած կ'ըլլան . Աւետարանի յորդորները կ'անցնին արիւնին,

մէջ ու կը դառնան կ'ըլլան բնական զգացումներ։

Փիլիսոփայ մըն էր նաև այդ մարդ։ Կը կարծէր թէ՝ ինչպէս որ բնութիւնը պարտաւորիչ ըրած է մարդուս համար ծագիլի հիւանդութիւնը, նոյնպէս ալ վիշտը պարտաւորիչ է։ Աշխարհիս մէջ պէտք է դառնութիւն ունենալ . միայն թէ՝ բարեգործութիւնը բարեխօս մըն է Աստուծոյ քով և կը մեղմացնէ վիշտը, կը չափաւորէ կեանքի դառնութիւնը։ Իսկ շարագործութիւնը միշտ պատուհասաբեր է։ Չարն ինքնին անիծեալ է։

Անէծքի սոսկումը ունէր . ժողովուրդի հետ կը հաւատար թէ՝ անէծքը զօրութիւն մըն է որ կը պրկէ, կը շղթայէ իր գոհը և անպաշտպան կը մատնէ զնա կեանքի ամէն դառնութիւններուն։ Անէծքը միայն մարդկան բերնէն չ'ըլլեր, այլ չարին գործերն իրենց հետ կը բերնն տանէծքը։ Ու սոսկալով կը մտածէր թէ՝ անդին իր զաւակն ալ, Մ'կրն ալ, անէծքի զօհ մը կը դառնայ։

Երբ իր անդամալուծութեան ու լքումին համար կը միտիւարուէր իմաստասիրական ու քրիստոնէական մտածութիւններովն եւ զգացումներովն, սրտէն արիւն կ'երթար իր զաւակի վրայ խորհելով։

Ու միայնութեանը մէջ իր աղջկանը Մարիամին կ'աւանդէր իր երկար փորձառութիւններուն, իր երկար մտածութիւններուն ամիսովումը։ Կ'աւանդէր անոր, որպէս զի նա ալ իր զաւակներուն աւանդէ զայն . և այսպէս մեծ հօրը ոգին սերունդէ սերունդ կենդանի մնայ։

Այս չէ՞ միթէ սքանչելի միջոցն որով սերունդները կը կրթուին, և բարոյականի ոյժը անմեռ կը պահպանուի։

Եւ գիշեր մը լուր բերին այդ աղջկան թէ հայրը կ'այրի, վաղեց եկաւ . ուշ չէր . տակաւին հօրը վրայ հոգի կար . քիչ մ'ալ կրնար ասլիլ ու վերջին օրհնէնքը տալ աղջկանը։

Մերունին լոյսն իր մօտ բերելու համար ջանացած պահուն բռնկած էր, անմիջական օգնութիւն չէր հասած . ինք դողդոջուն ու հիւանդ, չէր կրնար մարել . և երբ օգնութիւններն հասան այլ եւս անօգուտ էին։

Կը վերջացնէր յաջորդ թուով։

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՏԻՄԱՐԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

Բարեկամներէս ոմանք քովս տեսան տետրակ մը, ուր արձանագրել սկսած էի օրուան մանր մուներ դէպքեր և անոնց վրայ խորհրդածութիւններ. առաջարկեցին ինձ հրատարակել հետզհետէ Մասիս մէջ այդ տետրակի պարունակութիւնը. Պատասխանեցի թէ օրագիրս չեմ պատրաստեր հանրութեան համար, այլ իմ անձնական յիշողութեանս պիտի գործածեմ դայն: Սակայն բարեկամներս ստիպեցին զիս որ անկէ քաղուածներ հրատարակեմ, էն անվնաս կտորները:

Կ'անսամ ինձ եղած այս յորդորին. բարեկամներուս բան մը չեմ կրնար մերժել: Մեղքն իրենց վիզն երբ այս հրատարակութիւն պարսաւանքի առարկայ ըլլայ:

Եւ պիտի ըլլայ: Զեւագիրս ընդօրինակելու պահուս անգրագործայ թէ այլ և այլ դէպքերու վրայ մտածութիւններս ողջմտութեան դրողմը չեն կրեր. յայտնած միայքերս անշուշտ տխմարաբանութիւն պիտի համարուին, իրաւամբ ուրեմն կը վերնագրեմ այս հրատարակութիւնը «Տեմաքի Զ Երգաբեբը»:

Այս վերնագրին ներքեւ գրածներս կարդացողը պիտի ըսէ.

—Է՛հ, տխմար մը այսպէս պիտի դրէ. ուրիշ ի՞նչ կերպով կրնար դրել:

Բաւութիւնս այս պարսաւին մէջ է:

ՀՐԱՋԴԱՆ

7 Ապրիլ 90

Նոր կիրակի. արեւ արեգակ օր մը. Լեւոն Բաշալեանի հետ Օրթագեղէն կ'ելլենք Գառը գիւղ երթալու. Գարա-քէօյի կամուրջին գլուխը մեզ կը մօտենայ երիտասարդ մը, հինցած զգեստներով: Նիկար է այդ երիտասարդ. աչքերը փոսն են ինկած, սովածի մը աչքերուն պէս: Յած ճայնով քանի մը փարայ կ'ուզէ: Երբ նա կը հեռանայ, կը հարցնեմ Լեւոնին թէ ճանչցա՞ւ ո՛վ է: Ո՛չ, կը պատասխանէ:

—Պէ՛զնեմ ամիրային քրոջը որդի՞ն է թէ քրոջը թուը, լաւ չեմ գիտեր. միայն թէ ասոր մայրը շատ սիրելի էր Խաղէզ ամիրային:

Լեւոն ետին կը դառնայ և, յուզեալ, ուշագիւր կը նայի:

Հովը սաստիկ է. շոգենաւին մէջ չենք կրնար բացօթեայ նստիլ. կ'իջնենք Լեւոնէն կ'ուզեմ երէկուան Արեւելը զոր դեռ չեմ կարդացած: Կը նայիմ նախ, ինչպէս աւանդութիւն է, Ազգային լուրերուն: Գում-Գաբուի Ս. Յարութիւն եկեղեցիի պաշտօնական ծանուցումը ուշագրութիւնս կը գրաւէ. զի այդ ծանուցումի մէջ Պէ՛զնեմ ամիրայի անունը աչքիս կը զարնէ: Կը կարդամ ծանուցումը և կ'օրինակեմ օրագրիս մէջ.

«Յառաջիկայ Նոր Կիրակէ օրն Ս. Եկեղեցւոյս տարեդարձը լինելով Ամեն. «և Բարձրաշնորհ Տ. Տ. Խորէն Ս. Պատարար Հայրը Ս. Պատարագ պիտի մատուցանէ Ազգային անդուգական բարերար և Ս. Եկեղեցւոյս հիմնարկութեան սկզբնապահաճառ բարեյիշատակ Պէ՛զնեմ Յարութիւն Ամիրայի հոգւոյն «ի հանգիստ»»

Զըսեմ հաւանօրէն այլ ըսեմ անշուշտ Պատրիարք ու բարեպաշտօն Հայերը կը հաւատան հոգւոյ անմահութեան: Ուրեմն կը կարծե՞ն թէ Պէ՛զնեմի հոգին հեղեղութեան դառն ժպիտ մը չունենայ երբ տեսնէ թէ այն ժամուն մինչ իր անունը կը փառարանի եկեղեցիներու մէջ, անդին իր արիւնէն եղողներն, իր սիրելիները կը մուրան փողոցները:

Եթէ Հայերը տային Պէ՛զնեմի արեւակիցներուն «բաժակ մը ցուրտ ջուր», միթէ բարերարին ոգին աւելի չէ՞ր հրճուեր:

Այո՛. աղքատի տրուած «բաժակ մը ցուրտ ջուրը» պատարագէ աւելի հաճոյ է Աստուծոյ—գէթ այսպէս կը հաւատտէ Աւետարանը, բայց յաջս Աստուծոյ. իսկ յաջս մարդկա՞ն:

7 ապրիլ

Կը թափառինք Գառը-գիւղի մէջ. կը փնտռենք Եղիա Տէմիրճիպաշեանի տունը. ոչ ոք կրնայ զայն մեզ ցոյց տալ: Դէմերնիս կ'ելլեն հայ բեռնակիր մը և հայ տղայ մը. Լեւոն կը հարցնէ անոնց թէ՛ ո՞րն է Եղիա Եփէնտի Տէմիրճիպաշեանի տունը, վստահօրէն կը պատասխանեն թէ այդպէս

մարդ չկայ Գառը-գիւղի մէջ :

— Զգէ՛, ես հարցնեմ, բո՞ր :

Եւ հարցուցի :

— Աղբա՛ր, Ներսէսեան Գրիգոր էֆէն-տիի պաշտօնին տունը ո՞րն է :

— Ըհա՛, ըսին միարեւմտեան հայ բեռնա-կիրն ու հայ տղան, մատնանիչ ցոյց տա-լով Նզիրայի տունը :

Բանականութեան հակառակ է՝ տուն մնտուէլ Գառը-գիւղի մէջ գրադէտի ա-նուն տալով :

13 ապրիլ

Խորհրդարանին շուրջը :

Ատեանը բացուած է . խոր լռութիւն . երբ ներս կը մտնեմ, կ'ապշիմ : Արդեօք երկարատեւ քունէ՞ մը կ'արթննամ, տա-րիներով նիրհելէ յետոյ . ամէն ինչ յետա-շրջուել է ու ես չեմ գիտեր :

Սուրէնեան և Գուրգէն էֆէնտիներն աջակողմը նստած են, Նորատուեկեան Յա-րութիւն էֆէնտիի քովիկը, բայց քիչիկ մը հեռու, ետեօք . յարգանքի անջրպետ մը ձգած են :

Կը հարցնեմ երեսօրսանի մը թէ ի՞նչ պատահած է :

— Շատ նորութիւններ, կը պատասխանէ : Նախ՝ պաշտօնական : Սուրէնեան էֆէն-տի համբուրեց Նուրեան էֆէնտիի ձեռքը . Նուրեան էֆէնտի համբուրեց Սուրէնեան էֆէնտիի ձախառը : Պէրպէրեան էֆէնտի ըսաւ թէ՝ «Սիննա և Օգոստոս միմեանց ձեռք կարկառեցին» : Թորոսեան էֆէնտի ձախակողմէն ծախահարուել է . եկեղեց-ւոյ շահերը պաշտպանած է ընդդէմ ա-ջակողմին :

Նուրեան էֆէնտի բեմն է . Սուրէնեան էֆէնտի կը միթմրթայ «բայց... բայց... բայց» : — Քիչ մ'ալ և պիտի ըսէ՛ . «ձախ-տիս համբոյրք ետ տամ, ձեռքիդ համ-բոյրք ետ տուր» :

Գուրգէն էֆէնտի բեմը կ'ելլէ . կը մեկնիմ :

Ուշ ատեն կը վերադառնամ . Գուրգէն էֆէնտի բեմն է :

Ատեանը կը վազուի . Գուրգէն էֆէն-տի բեմն է : Եւ կը յիշեմ . այսօր ուրբաթ է, և ամսոյն 13ը . օրը չար է :

20 ապրիլ

Խորհրդարանին շուրջը :

Յերեկ՝ Ատեանը բացուած է . Գուրգէն էֆէնտի բեմն է :

Երեկոյ՝ Գուրգէն էֆէնտի բեմն է :

Վերջապէս՝ Գուրգէն էֆէնտի բեմն է . Գուրգէն էֆէնտի խօսք առած է յաջորդ-նատին առաջինը խօսելու... և վերջինը :

Պալատէնիայի անմիջական ջնջումը պա-հանջող երեսօրսաններն այսօր տարբեր լեզու կը գործածեն : Իրենց խօսելու ե-զանակէն կը մակաբերեմ թէ հիմա ա' իրաւունք մը չեն պահանջեր . այլ ողոր-մութիւն կարձեռ կը խնդրեն . Ռուսիա՝ թո՛ղ գլխաւոր մեզ նման փոքրիկ ժողովուր-դի մը, կ'ըսեն :

Այդ երեսօրսաններ սակայն որքան որ ալ պաշտատցի կերպարանք ունին, բայց և այնպէս ինձ կը յիշեցնեն ֆաթու-լան մուրացիկներն, որք երբ ողորմու-թիւն խնդրեն ձեռքերին կ'երկնցնեն գոռոզ շարժումով . զգացնել կուտան թէ իրենց աղաչանքի ներքե սպառնալիք կայ :

Կաթողիկոսական յանձնաժողովը կ'ա-ռաջարկէ պատուիրակ մը զրկել Ազգ. Ժո-ղովի կողմէ իջնածին, բանակցելու հա-մար Կաթողիկոսի հետ : Կարծեմ թէ Հա-ոց ազգին էն բիրտ մարդը պէտք է կոչ-ժուր այդ պաշտօնին :

Երբ այս խնդիր կը յուզուի Ազգ. Ժո-ղովի մէջ, կը յիշեմ կատակերգութիւն մը : Հայր մը իր աղջիկը պիտի կարգէ . փեսա-ցուն եկած է նստարին հետ : Ամուսնու-թեան պայմանագիրը կը պատրաստեն .

«Երբ աղջկան հայրը մեռնի...»

«Երբ աղջկան հայրը մեռնի...»

Պայմանագրին յօդուածներն այս բա-ռերով կ'սկսին :

— Բայց խնդիրը միայն իմ մահուանս վրայ է, կ'ըսէ խեղճ հայրը դուք ելած :

Միթէ Կաթողիկոսն ալ չը՞պիտի ըսէ պատուիրակին :

— Բայց պատուիրակ էֆէնդի՛, միայն իմ մահուանս վրայ խօսում էք :

Եւ արդարեւ պատուիրակն անդադար պիտի ըսէ :

— Վեհափառ տէր, Ձեր Ս. Օծութեան

վախճանելէն յետոյ ի՞նչպէս պիտի մասնակցինք ձեր յաջորդի ընտրութեան: Վեհափառ տէր, Ձեր Ս. Օծութեան վախճանելէն յետոյ, ո՞ր գրութեամբ պիտի ընտրուի կաթողիկոսը:

Այդ. ժողովի ատենապետը ինձ կ'ըսէ թէ՝ հեգնութեան ու ծիծաղի ոճով կը պատասխանեմ Պէրպէր-Գուրգէն խմբակի ընդմիջումներուն:

Կը մտածեմ թէ արդեօք յանցաւորն ե՞ս եմ որ այդ ոճով կը խօսիմ: Ու կը յիշեմ ժամանակակից փիլիսոփայի մը կարծիքը:

— «Ոչ ոք իրեն ոճը ինքիրենը կ'ստեղծէ. ոճը կ'ստանանք գէպքերէն, որոց հետ յարաբերութեան մէջ ենք: »

* *

21 ապրիլ

Այս օրուան Արեւելի Էմ. Էֆ. Եսայեանի յօդուած մը կը հրատարակէ ընդդէմ Մ. Խիս ապրիլ 15 թիւին մէջ Խորենացիին աշխարհաբաւ թարգմանուելու յօդուածին. ջերմ գրաբարեանը կ'ըսէ ի միջի այլոց.

«Գրաբարի գիտութիւնը պիտի ծառայէ՝ նոյն իսկ աշխարհաբար լաւ գրելու. ապացոյց՝ աշխարհաբար լաւագոյն գրողները, նոյն իսկ գրաբարի հմուտ եղողներն են: »

Իսկ ես կարգաւորվ այդ գրաբարեանի յօդուածը, կը մտածեմ. Գրաբարի գիտութիւնը պիտի ծառայէ՝ նոյն իսկ աշխարհաբարը գէշ գրելու. ապացոյց՝ Էմ. մանուէլ Էֆէնտի Եսայեան:

Այդ յօդուածի մէջէն կը նշանակեմ անցողաբար.

«Այն օրը Բեդէ հետ և Բեդէ պէս նոր աշխարհ մը թեւակոխած պիտի համարին զիրենք: »

«Ինչէ՛ հետ շատեր ապահով եմ եկեղեցի ոտք չպիտի կոխեն: »

Մենք տգէտ աշխարհաբարեաններս կ'ըսենք Բեդէ, Էնչ, մտածելով թէ ուղղական Բեդ սեռական Բեդ, ուղղական Էնչ սեռական Էնչ չըլլար:

Տարակոյս չկայ թէ կատարելագործելով աշխարհաբարի զարգացումը՝ գրաբարով էմմանուէլ Էֆ. Եսայեաններն օր մը պիտի ըսեն.

Դոցաի, Նոցաի, Էղբօրի, մօրի, հօրի: Ուրիշ տեղ մը կ'ըսէ.

«Եւ մանաւանդ այս ազգային դժուար պարագայից մէջ յարմար կը տեսնենք կրօնը եւ այլն. . . »

Կարծեմ թէ գրաբարեան մը պէտք էր ըսել յարմար:

Ուրիշ տեղ մը ծիծաղս չեմ կըրնար բռնել:

«Ինչպէս մենք ալ չեմք կրնար պահանջել որ Մովսէս քերթողի, որ նոյն ինքն է Խորենացի, և Սահակայ և Մեսրոպայ վսեմ շարահանները և այլն: »

Տգէտ աշխարհաբարեան մը պիտի գըրէր.

«Ինչպէս մեք ալ չենք կրնար պահանջել որ Մովսէս քերթողի, որ նոյն ինքն է Խորենացի, և Սահակայ և Մեսրոպայ շարահանները և այլն: »

Բայց յուշատեարս շատ կը ծանրաբեռնի եթէ այդ լեզուի ամէն գիտողութիւններն ընեմ. զատ յօդուածի մը նիւթ ընեմ:

Սակայն երբ կ'ըսէ թէ բարձրանալու է գրաբարին, «բայց ելնելու հասնելու է այդ բարձրութեան, տեսնելու ըմբռնելու համար նորա գերազանցութիւնը», կը մըտածեմ թէ լաւագոյն չէ՞ր ըլլար որ միշտ վարը մնային և չհասնէին «այդ բարձրութեան» էմմանուէլ Էֆէնտի Եսայեանները: Եթէ այդ գրութիւնն է այդ բարձրութիւն, կրնանք Պալլաքի մէկ նըմանութիւնն իրենց յարմարցնել. կապիկները—և գրաբարեանները լեզուի կապիկներ են— որքան բարձրանան, վեր ելլեն, այնքան աւելի իրենց մերկութիւնը և խայտառակութիւնը երեւան կուգայ:

* *

24 ապրիլ

Ինձ յանձնեցին Արեւելի խմբագրատան մէջ նոր հրատարակութիւն մը, կիսամուկայ, «Պապի» անունով: Խմբագիր չունի. կը հրատարակուի Հոռոմէական Հայոց Պատրիարքարանի կողմէ. — հաւանօրէն: —

Բնականաբար նախ տպագրութիւնն ուղարկութիւնն կը գրաւէ: Պաղտատեանի սքանչելի տպագրութիւն է: Թուղթր եւրոպական և ընտիր հրատարակութիւններու թղթին հաւասար է:

Իսկ երբ արտաքինը նայելէ յետոյ նիւթերուն կ'անցնիմ, կը հարկադրիմ յիշեցնել—ինչպէս այս տեսակ ամէն հրատարակութիւններուն.

«Ձի սրէք զարտաքինն զբաժակին և զսկաւառակին: »

ՀՐԱԶԴԱՆ

Արտօնատէր

Կ. Ս. Իիթիիճեմն

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ